



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«17» 05 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000035

Ձեռնարկողը՝

«ԱԳԱՊԵ» ՍՊԸ
Ք. Երևան, Աղայան 9/91

Գործունեությունը՝

ՀՀ 6-րդ պայմանական տարածքում /Սյունիքի մարզի
Կապան համայնք/ նավթի և բնական գազի երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000035

« 17 » 05 2019թ.

«Ագապե» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ 6-րդ պայմանական տարածքում /Սյունիքի մարզի Կապան համայնք/ նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ագապե» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ, կից փաստաթղթեր
Գործունեության վայրը՝ Գործունեության կատեգորիան՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք «Գ»

Հայաստանի տարածքը գազի և նավթի ուսումնասիրությունների համար կառավարության կողմից բաժանվել է 6 /վեց/ պայմանական տարածքների՝ համապատասխան կորդինատներով: Պայմանական տարածքը դա որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող տարածք է, որտեղ պետք է իրականացվեն նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքներ: Ընկերությունը նախատեսում է իրականացնել նավթի և բնական գազի երկրաբանահետախուզական ուսումնասիրության աշխատանքներ 6-րդ պայմանական տարածքում՝ Սյունիքի մարզի Կապան համայնքում:

2007թ. սկսած երկրաբանահետախուզական լայնամասշտաբ աշխատանքների հիման վրա «Ագապե» ընկերությունը 6-րդ պայմանական տարածքում հայտնաբերել է բազմաթիվ հեռանկարային ստրուկտուրաներ կամ «Հեռանկարային տեղամասեր»: Նշված աշխատանքները ներառում են հիմնականում հեռակառավարվող զոնդավորում, գրավիհետախուզական, մակերևութային երկրաքիմիական հետազոտություններ, մակերևութային երկրաբանական կառուցվածքների քարտեզների ուսումնասիրություն, ինչպես նաև «ԱԳԱՊԵ» ընկերության կողմից ստեղծված երկրաբանական և երկրաֆիզիկական համապարփակ տվյալների բազան, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքին վերաբերող՝ ավելի քան հիսուն տարվա նյութեր և տվյալներ:

Նախատեսվում է աշխատանքները սկսել 2019թ-ի ապրիլին և ավարտել 2024թ-ի մարտին:

«Ագապե» ՍՊԸ-ն նախատեսում է 6-րդ պայմանական բլոկում /Կապան համայնք/ իրականացնել նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրություն՝ սեյսմովիբրատորների օգնությամբ:



Սեյսմահետախուզության հիմնական սկզբունքը ձայնային ալիքներ ուղարկել (օգտագործելով տատանում առաջացնող ալիքներ, ինչպիսիք են՝ սեյսմովիբրատորները) երկրի ընդերք, որտեղ երկրակեղևում գտնվող տարբեր շերտերն անդրադարձնում են այդ ալիքները, որոնք որոշված ժամանակահատվածում գրանցվում են հատուկ սեյսմաընդունիչների գեոֆոնների միջոցով: Անդրադարձվող ալիքները գրանցվում են մագնիսական ժապավենի վրա: Մագնիսական ժապավենի վրա տվյալները գրանցելուց հետո դրանք մշակվում են հատուկ համակարգչային ծրագրով, որի արդյունքում ստացվում են մշակված սեյսմիկ պրոֆիլներ: Նշված պրոֆիլները կամ տվյալների լրակազմը կարելի է մեկնաբանել՝ հնարավոր ածխաջրածինների պաշարները որոշելու նպատակով:

Նախատեսում է օգտագործել 4 հատ սեյսմովիբրատորներ և անլար գեոֆոններ: Գեոֆոնները տեղադրվելու են ընդունիչից 30 մետր հեռավորության վրա, իսկ մեկը մյուսից 2-2.5 մետր հեռավորության վրա:

Սեյսմովիբրատորները սովորաբար աշխատում են իրենց հզորության մինչև 60% աշխատանքայի ռեժիմով, արդյունավետ քաշը կազմում է մոտ 16-17տ: Ամենահզոր գոյություն ունեցող վիբրատորներն առաջացնում են 270ԿՆ ազդեցություն: Այս հետազոտությունների համար նախատեսվող սեյսմովիբրատորները մոտ 8-80Հց հաճախականությամբ են, մաքսիմալ հաճախականությամբ ալիքների տատանումը տևում է 5-12 վայրկյան, անդրադարձող ալիքի ձայնագրումը գեոֆոնների միջոցով մոտ 8 վայրկյան, ընդհանուր տևողությունը՝ մոտ 20վ, իսկ ազդեցությունը, որով դրանք կարող են ազդել երկրի մակերեսի տվյալ կետում մոտ 16ԿՆ: Ազդեցության կետից 20-100մ հեռավորությունից հետո ալիքի տատանման հզորությունը մարվում է կենսաբանական օրգանիզմների համար և վերջիններիս որևէ վնաս չի կարող հասցնել: Այդ ալիքների հզորության ազդեցությունը նվազում է երկրաչափական պրոգրեսիայով, բացի այդ ինչ որ չափով դրանք մարվում են նաև ապարներով կլանվելիս: Մոտ 16.5մ հեռավորության վրա այդ ալիքների ազդեցությունը կարելի է համեմատել մարդու վազքի ազդեցության ուժի հետ, իսկ անմիջապես սեյսմովիբրատորի կողքը կազնելիս կարելի է համեմատել անցնող 30 տոննա բեռնափոխադրող ավտոմեքենայի ազդեցության ուժի հետ: Ակնկալվում է ստանալ ալիքների ազդանշան 2-6կմ խորությունից, ինչը կախված է ապարների որակական հատկանիշներից: Անդրադարձած ալիքները գրանցվելու են սեյսմոընդունիչների միջոցով՝ գեոֆոններ, որոնք տեղադրվելու են 2-2.5մ միմյանցից հեռավորության վրա սեյսմոպրոֆիլի երկայնքով: Սեյսմոպրոֆիլները /ճանապարհները/ տեղանքում որոշելու համար ընկերությունը համագործակցելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ընտրելով ճանապարհներ, որոնք չեն ազդի համայնքի առօրյա կյանքի վրա, չեն վնասի կոմունիկացիաներին և տարածքում գնտվող պատմամշակութային հուշարձաններին և կոթողներին: Սեյսմովիբրատորները շենք շինություններից կօգտագործվեն առնվազն 300մ, իսկ պատմամշակութային հուշարձանների և կոթողների պահպանման գոտիներից դուրս:

Ընկերությունն աշխատանքները կիրականացնի յուրաքանչյուր ԲՀՊՏ համար առանձին սահմանված պահպանման գոտուց դուրս: Աշխատանքները կկատարվեն հեռու գետերից և աղբյուրներից:

Սեյսմոհետախուզական աշխատանքների ընթացքում սեյսմովիբրատորները կուղեկցվեն պարեկային /հերթապահ/ մեքենաներով, որոնց վրա ամրացված կլինի ազդանշան, ապահովվելով երթևեկության անվտանգությունը, ճանապարհների անցանելիությունը: Սեյսմովիբրատորների մաքսիմալ արագությունը կազմում է 25-28կմ/ժ:



Հատուկ բեռնափոխադրման մեքենաներով Երևան քաղաքից սեյսմովիբրատորները տեղափոխվելու են նախատեսվող գործունեության տարածք, որտեղից արդեն իրենց երթով անցնելու են ուղիները: Կապան համայնքում աշխատանքների ավարտից հետո սեյսմովիբրատորները նույնպես բեռնափոխադրման մեքենաների միջոցով տեղափոխվելու են այլ վայր:

Սեյսմոհետախուզական աշխատանքների ընթացքում սեյսմովիբրատորների և այլ սարքավորումների ընթացիկ վերանորոգման կամ դետալների փոխարինման ժամանակ բոլոր փոխարինվող նյութեր/դետալները լինելու են խիստ հաշվառված արտերկրից հրավիրված սեյսմոհետախուզական ընկերության կողմից, քանի որ բոլոր սարքավորումները և պահեստամասերը ներմուծվելու են ՀՀ տարածք «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով և ենթակա են լինելու արտահանման նույն քանակով, հաշվի առած բնական մաշվածությունը:

Աշխատանքների ժամանակ ընկերությունը վարձակալելու է գրասենյակ և պահեստային տարածք պահեստամասերի (անիվներ, գեոֆոններ և այլն) համար: Բոլոր պահեստամասերը ներմուծվելու են Հայաստան հատուկ կոնտեյներներով: Սեյսմովիբրատորներն աշխատանքային օրվա ավարտից հետո տեղակայվելու են մոտակա հարմար տարածքում: Ոչ աշխատանքային ժամերի ընթացքում սարքավորումների (սեյսմովիբրատոր, գեոֆոն) տեղակայման վայրում լինելու է պահնորդային ծառայություն:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում ուսումնասիրվելու են նախնական ընտրված սեյսմոպրոֆիլների ճանապարհները, որոնք հստակեցվելու են և համաձայնացվելու են համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ:

Սեյսմովիբրատորներն աշխատում են դիզ.վառելիքով, դիզ.վառելիքի պահեստավորում չի նախատեսվում, քանի որ վառելիքի մատակարարումն ապահովելու է մատակարարող ընկերությունը:

Ներկայացված նախնական գնահատման հայտի նպատակն է զարգացնել նավթի և գազի երկրաբանության հիմնական բաղադրիչների, այդ թվում՝ ստրուկտուրայի (շատ կարևոր է, քանի որ դեռևս ոչ մի հստակ սահմանված ստրուկտուրա չի հայտնաբերվել) վերաբերյալ գիտելիքները, պարզել մայր ապարների և ավազանների տեղաբաշխումը և որակը, ածխաջրածիններ առաջացնելու հնարավորությունն ու դրանց պարփակման պոտենցիալը:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները և ծավալները:

- Երկրաբանական արխիվներից, երկրաբանության ինստիտուտի գրադարանից, Լոնդոնի Երկրաբանական միության և բրիտանական գրադարաններից և այլ աղբյուրներից վերցնել բոլոր համապատասխան նյութերի կրկնօրինակները: Այնուհետև սկսել երկրաբանական և երկրաֆիզիկական բոլոր տվյալների համապարփակ ուսումնասիրություն:

- Հեռանկարային տարածքներում ստանալ մոտավորապես 100կմ 2D սեյսմահետախուզական տվյալներ:

- Մշակել 100կմ 2D սեյսմահետախուզական տվյալները: Նոր 2D սեյսմահետախուզական տվյալների մեկնաբանում և դրանց ներառումը երկրաբանական, երկրաֆիզիկական այլ տվյալներում: Կազմել հիմնական երկրաբանական հորիզոնների



հասակային և խորությունների քարտեզը: Համալրել առանձին հեռանկարային տեղամասերի հասակի և խորությունների վերաբերյալ քարտեզները:

- Իրականացնել մակերևութային երկրաքիմիական քարտեզագրման ուսումնասիրություններ 6-րդ պայմանական տարածքից ընտրված հեռանկարային տարածքներում: Այս մեթոդը հնարավորություն կտա բացահայտել ընդերքում նավթի կամ գազի հավանական ծուղակները, հնարավոր միգրացիոն ուղիները, մասնավորապես՝ ավազանի եզրերին կամ խզվածքների երկայնքով: Ընկերությունը կիրականացնի հավաքված նմուշների երկրաքիմիական անալիզ՝ մայրական ապարի պոտենցիալը գնահատելու նպատակով:

- Ընկերությունը կիրականացնի մանրամասն երկրաբանական քարտեզների ստեղծման ծրագիր՝ 6-րդ պայմանական տարածքում: Կնմուշառվեն հավանական նավթահավաքիչ ապարները, ինչպես նաև կորոշվեն ավազանի (կոլեկտորի) պարամետրերը:

- Կիրականացվեն պասիվ սեյսմոհետախուզական աշխատանքներ:

Ընկերությունը 6-րդ պայմանական տարածքներում երկրաբանահետախուզական և սեյսմահետախուզական աշխատանքներ իրականացնելու ընթացքում գոյություն ունեցող ջրային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի վրա տվյալ փուլում որևէ ազդեցություն չի լինելու, քանի որ տվյալ աշխատանքների իրականացումը՝ միջազգային ստանդարտների օգտագործմամբ, անվտանգ են և շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն չեն ունենա:

Նախատեսվող գործունեության ընթացքում արդյունաբերական թափոնների առաջացում չի լինելու:

Սեյսմահետախուզական աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նախատեսվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես տեխնիկայի տեղաշարժի և սեյսմապրոֆիլների անցկացման համար օգտագործել գոյություն ունեցող ճանապարհները (հիմնական մայրուղիները, բնահողային և ներտնտեսային ճանապարհները), ինչը թույլ կտա զերծ մնալ հողաբուսական ծածկույթի խախտումից և բույսերի ոչնչացումից:

Ընկերությունը բացառում է երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացումը հատուկ պահպանվող, անտառային կամ պատմամշակույթային կոթողների հարակից տարածքներում:

Բուսական աշխարհին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված աշխատանքները կատարվելու են գոյություն ունեցող ճանապարհների սահմաններում և նոր ճանապարհների բացում չի նախատեսվում:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն կենդանիների բնադրման և ձվադրման վայրերից և ժամանակաշրջանից դուրս:

Մակաբացման հողային աշխատանքներ՝ այսինքն հողի բերրի շերտի հանման, պահեստավորման աշխատանքներ նախագծով չեն նախատեսվում, վնաս հողային ծածկույթին չի հասցվելու:

Սույն նախնական գնահատման հայտով ռեկուլտիվացման աշխատանքներ չեն իրականացվելու: Ճանապարհի եզրերին ընդամենը խրվելու են գեոֆոնների ձողերը, որոնց չափերը չեն գերազանցում՝ երկարություն՝ 8-14սմ, լայնություն՝ 4-20մմ և այդ ձողերի հողի մեջ խրման դեպքում հողածածկույթի խախտում չի լինի:

Եզրահանգումներ. Ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության



ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի մարզի Կապան համայնքում, որոնց ընթացքում հնչել են իրարամերժ կարծիքներ: Հանրության մի մասը դեմ էր արտահայտվում հանքարդյունահանմանը, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին, դրա փոխարեն առաջարկելով մարզում զարգացնել առաջատար տեխնոլոգիաներ:

Փորձաքննական պահանջներ

1. Բացառել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները հատուկ պահպանվող և անտառային տարածքներում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը և սոցալ-տնտեսական ծրագրի իրականացմանը:
3. Հորատման տեղամասը և խորությունը որոշելուց հետո՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է բնապահպանության նախարարություն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը՝ հորատման աշխատանքների իրականացմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազապե» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ 6-րդ պայմանական տարածքում /Սյունիքի մարզի Կապան համայնք/ նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Զ. Զուռնայան